



ԱՐՑԱԽԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ
ԳԻՏԱԿԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ
ՄԻԱՎՈՐՈՒՄ (ԱԵԳՄՄ)




ԵՐԵՎԱՆԻ
ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԲԱՆ



«ԶԱՆԳԵԶՈՒՐԻ
ՊՂՆՁԱՄՈՒԼԻԲԳԵՆԱՅԻՆ
ԿՈՄԻՏԵԱՑ» ՓԲԸ



ԳԻՏԱԿԱԿԱՆ ԱՐՑԱԽ



SCIENTIFIC
ARTSAKH

НАУЧНЫЙ
АРЦАХ

Հիմնադիր – Founder – Учредитель:
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ (ԵՊՀ)
YEREVAN STATE UNIVERSITY (YSU)
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ (ЕГУ)
www.y-su.am

Հրատարակիչ – Publisher - Издатель:
ԱՐՑԱԽԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՄԻՎՎՈՐՈՒՄ (ԱԵԳՄՄ)
UNION OF YOUNG SCIENTISTS AND SPECIALISTS OF ARTSAKH (UYSSA)
ОБЪЕДИНЕНИЕ МОЛОДЫХ УЧЁНЫХ И СПЕЦИАЛИСТОВ АРЦАХА (ОМУСА)
www.aegmm.org

ԳԻՏԱԿԱՆ ԱՐՑԱԽ
SCIENTIFIC ARTSAKH
НАУЧНЫЙ АРЦАХ

№ 1(2), 2019

«Գիտական Արցախ» պարբերականն ընդգրկված է Հայաստանի Հանրապետության Բարձրագույն որակավորման կոմիտեի (ՀՀ ԲՈԿ) սահմանած դոկտորական և թեկնածուական ատենախոսությունների հիմնական արդյունքների ու դրույթների հրատարակման համար ընդունելի գիտական պարբերականների ցանկում:

The «Scientific Artsakh» journal is included in the list of scientific periodicals acceptable for publication of the main results and provisions of doctoral and candidate theses established by the Higher Attestation Committee of the Republic of Armenia (HAC RA).

Журнал «Научный Арцах» включен в список научных периодических изданий, приемлемых для публикации основных результатов и положений докторских и кандидатских диссертаций, установленных Высшим аттестационным комитетом Республики Армения (ВАК РА).

ԱԵԳՄՄ – UYSSA – ОМУСА
ԵՐԵՎԱՆ – YEREVAN – ЕРЕВАН
2019

Հրատարակության է երաշխավորվել Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ

Рекомендовано к публикации решением ученого совета Ереванского государственного университета

Recommended for Publication by the Yerevan State University Academic Council Decision

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՐԴ

Լախագահ՝ Արամ ՄԻՄՈՆՅԱՆ ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Գլխավոր խմբագիր՝ Ավետիք ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ
Գլխավոր խմբագրի տեղակալ՝ Թեհմինա ՍԱՐՈՒԹՅԱՆ, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

Անդամներ՝

Արծրուն ԱՎԱԳՅԱՆ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Հրանտ ԱՎԱՆԵՍՅԱՆ, հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Դավիթ ԲԱԲԱՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, դոցենտ
Վահրամ ԲԱԼԱՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Խաչիկ ԳԱԼՍՅԱՆ, քաղաքական գիտությունների դոկտոր, դոցենտ
Զուլիետա ԳՅՈՒԼԱՍԻՐՅԱՆ, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Վլադիսլավ ԳՐՈՒԶԴԵՎ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (Կոստրոմա, ՌԴ)
Գևորգ ԴԱՆԻԵԼՅԱՆ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Արման ԵՂԻԱՉԱՐՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, դոցենտ
Մարել ԺԵՅՄՈ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (Օլշտին, Լեհաստան)
Վալենտինա ԼԱՊԵՎԱ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (Մոսկվա, ՌԴ)
Օտտո ԼՈՒԻՏԵՐՅԱՆՆԻ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (Չամբուրգ, Գերմանիա)
Նազիկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Սուշել ՀՈՎՍԵՓՅԱՆ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Գագիկ ԴԱԶԻՆՅԱՆ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Վշոտ ՍԱՐԿՈՍՅԱՆ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Էդիկ ՄԻՆԱՍՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Կարին ՆԵՐՍԻՍՅԱՆ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
Հայկ ՍԱՐԳՍՅԱՆ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Յուրի ՍՈՒՎԱՐՅԱՆ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Մաքսիմ ՎԱՍԿՈՎ, սոցիոլոգիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (Դոնի Ռոստով, ՌԴ)
Գարիկ ԲԵՌՅԱՆ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Տիգրան ԶՈՂԱՐՅԱՆ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Գիտական Արցախ, № 1(2), 2019, Երևան, ԱԵԳՄՄ հրատ., 2019, 480 էջ:

Scientific Artsakh, № 1(2), 2019, Yerevan, UYSSA publ., 2019, 480 pages.

Научный Арцах, № 1(2), 2019, Ереван, Изд. ОМУСА, 2019, 480 страниц.

«Գիտական Արցախ» պարբերականի 2019թ. 1-ին համարում տեղ են գտել հասարակական գիտությունների արդի հիմնախնդիրների վերաբերյալ Հայաստանի Հանրապետությունը, Արցախի Հանրապետությունը, Բելառուսի Հանրապետությունը, Իրանի Իսլամական Հանրապետությունը, Լեհաստանը, Շվեյցարիան և Ռուսաստանի Դաշնությունը ներկայացնող 50 անվանի ու երիտասարդ գիտնականների աշխատանքները:

In the first issue of the «Scientific Artsakh» journal in 2019 the works on topical issues of social sciences by 50 well-known and young scientists representing Republic of Armenia, Republic of Artsakh, Republic of Belarus, the Islamic Republic of Iran, Poland, Switzerland and the Russian Federation are published.

В первом номере за 2019-ый год журнала «Научный Арцах» опубликованы работы по актуальным проблемам общественных наук, авторами которых являются 50 известные и молодые ученые, представляющие Республику Армения, Республику Арцах, Республику Беларусь, Исламскую Республику Иран, Польшу, Швейцарию и Российскую Федерацию.

EDITORIAL COUNCIL

Chairman: Aram SIMONYAN, Director of Institute for Armenian Studies of YSU, NAS RA Associate Member, Doctor of History, Professor

Editor-in-Chief: Avetik HARUTYUNYAN, Ph.D in Law, Associate Professor

Deputy Editor-in-Chief: Tehmina MARUTYAN, Ph.D in Philology, Associate Professor

Members:

Artsrun AVAGYAN, Doctor of Philology, Professor
Hrant AVANESYAN, Doctor of Psychology, Professor
David BABAYAN, Doctor of History, Associate Professor
Vahram BALAYAN, Doctor of History, Professor
Gevorg DANIELYAN, Doctor of Law, Professor
Khachik GALSTYAN, Doctor of Political Sciences, Associate Professor
Gagik GHAZINYAN, Academician of NAS RA, Doctor of Law, Professor
Vladislav GRUZDEV, Doctor of Law, Professor (Kostroma, Russia)
Julietta GYULAMIRYAN, Doctor of Pedagogical Sciences, Professor
Nazik HARUTYUNYAN, Doctor of Pedagogical Sciences, Professor
Moushegh HOVSEPYAN, Doctor of Philology, Professor
Garik KERYAN, Doctor of Political Sciences, Professor
Tigran KOCHARYAN, Doctor of Political Sciences, Professor
Valentina LAPAEVA, Doctor of Law, Professor (Moscow, Russia)
Otto LUCHTERHANDT, Doctor of Law, Professor (Hamburg, Germany)
Ashot MARKOSYAN, Doctor of Economic Sciences, Professor
Edik MINASYAN, Doctor of History, Professor
Karen NERSISYAN, Ph.D in Economic Sciences, Associate Professor
Hayk SARGSYAN, Doctor of Economic Sciences, Professor
Yuri SUVARYAN, Academician of NAS RA, Doctor of Economic Sciences, Professor
Maksim VASKOV, Doctor of Sociology, Professor (Rostov-on-Don, Russia)
Arman YEGHIAZARYAN, Doctor of History, Associate Professor
Marek ZEJMO, Doctor of Political Sciences, Professor (Olsztyn, Poland)

РЕДАКЦИОННЫЙ СОВЕТ

Председатель: Арам СИМОНЯН, директор Института арменоведческих исследований ЕГУ, член-корреспондент НАН Республики Армения, доктор исторических наук, профессор

Главный редактор: Аветик АРУТЮНЯН, кандидат юридических наук, доцент

Заместитель главного редактора: Теймина МАРУТЯН, кандидат филологических наук, доцент

Члены:

Арцрун АВАГЯН, доктор филологических наук, профессор
Грант АВАНЕСЯН, доктор психологических наук, профессор
Назик АРУТЮНЯН, доктор педагогических наук, профессор
Давид БАБАЯН, доктор исторических наук, доцент
Ваграм БАЛАЯН, доктор исторических наук, профессор
Максим ВАСЬКОВ, доктор социологических наук, профессор (Ростов-на-Дону, Россия)
Хачик ГАЛСТЯН, доктор политических наук, доцент
Владислав ГРУЗДЕВ, доктор юридических наук, профессор (Кострома, Россия)
Джюльетта ГЮЛАМИРЯН, доктор педагогических наук, профессор
Геворг ДАНИЕЛЯН, доктор юридических наук, профессор
Арман ЕГИАЗАРЯН, доктор исторических наук, доцент
Мареk ЖЕЙМО, доктор политических наук, профессор (Ольштын, Польша)
Гарик КАЗИНЯН, академик НАН РА, доктор юридических наук, профессор
Гарик КЕРЯН, доктор политических наук, профессор
Тигран КОЧАРЯН, доктор политических наук, профессор
Валентина ЛАПАЕВА, доктор юридических наук, профессор (Москва, Россия)
Отто ЛЮХТЕРХАНДТ, доктор юридических наук, профессор (Гамбург, Германия)
Ашот МАРКОСЯН, доктор экономических наук, профессор
Эдик МИНАСЯН, доктор исторических наук, профессор
Карен НЕРСИСЯН, кандидат экономических наук, доцент
Мушег ОВСЕПЯН, доктор филологических наук, профессор
Гайк САРГСЯН, доктор экономических наук, профессор
Юрий СУВАРЯН, академик НАН РА, доктор экономических наук, профессор

Մարիամ Առաքելյան. Ուսանողների մեդիակոմպետենտության գնահատման խնդիրը անգլերենի իրավագիտական կողմնորոշման դասընթացում.....270
Mariam Arakelyan. The Problem of Students' Media Competence Assessment in the Legal English COURSES

Мариам Аракелян. Проблема оценки медиа-компетентности студентов на курсах юридического английского языка

Մանսուր Լարուի. Միջանձնային հարաբերությունների կառավարման արդյունավետությունն՝ ըստ սոցիոլոգիական հարցումների արդյունքների.....278
Mansour Larouei. The Effective Management of Interpersonal Relationships Based on the Results of Sociological Research

Мансур Ларуи. Эффективность управления межличностными отношениями согласно результатам социологических исследований

Համիդռեզա Կամիար. Մեծահասակների կրթության ռազմավարությունները.....285
Hamidreza Kamiar. Adult Education Strategies

Гамидреза Камиар. Стратегии образования взрослых

ԼԵՉՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
LINGUISTICS, LITERATURE STUDY
ЛИНГВИСТИКА, ЛИТЕРАТУРОВЕДЕНИЕ

Հռիփսիմե Չաքարյան. Զաղաքի տարածական մոտիվը Հենրիկ Էդոյանի պոեզիայում.....292

Hripsime Zakaryan. The City's Spatial Motif in Henrik Edoyan's Poetry

Рипсима Закарян. Пространственный мотив города в поэзии Генриха Эдоюна

Մերի Հովհաննիսյան. Հոմանիշների ոճական առանձնահատկությունները Վահան Տերյանի չափածոյում.....299

Meri Hovhannisyan. The Stylistic Peculiarities of Synonyms in Vahan Teryan's Speech Art

Мери Ованнисян. Стилистические особенности синонимов в поэзии Ваана Теряна

Սվետլանա Մանուչարյան. Կապան-Գորիս տարածաշրջանի խոսվածքների բայական համակարգերի համեմատական քննություն.....307

Svetlana Manucharyan. A Comparative Examination of the Verb Systems Of The Speeches (Dialects) of Kapan-Goris Areas

Светлана Манучарян. Сравнительный анализ категорий глагола в говорах региона Капан-Горис

Թեհմինա Մարության. Յեղասպանության արտացոլումը Սիմոն Սիմոնյանի ստեղծագործություններում.....322

Tehmina Marutyanyan. Some Issues on the Genocide in the Works by Simon Simonyan

Теймина Марутян. Отражение Геноцида армян в произведениях Симона Симоняна

ՀՈՄԱՆԻՇՆԵՐԻ ՈՃԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱԶԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԱՅԱՆ ՏԵՐՅԱՆԻ ԶԱՓԱՃՈՅՈՒՄ*

ՀՏԴ 82-1:821.19

ՄԵՐԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի գիտաշխատող,
մանկավարժության և կրթության վարժապետական կենտրոնի դասախոս,
ասիստենտ, բանասիրական գիտությունների թեկնածու,
թ. Երևան, Հայաստանի Հանրապետություն
mary.hovhannisyan@gmail.com

Հոդվածում ուսումնասիրվում ու վերլուծվում են բառապաշարի տարբեր շերտերին պատկանող բառերի հոմանշային կիրառությունները: Համագործածական, ինչպես նաև ոչ գործուն բառապաշարին պատկանող հոմանիշների քննությունը հնարավորություն է տալիս բացահայտելու տերյանական լեզվի հարստությունն ու բազմապատկությունը: Որպես հոմանշային բառի բաղադրիչներ Տերյանը հասկացական, տաղաչափական, հուլպարտահայտչական տարբեր նպատակներով գործածության մեջ է դնում նաև ժողովրդախոսակցական, բարբառային բառեր, նույնիսկ փոխառություններ ու օտարաբանություններ:

Բանաստեղծը հոմանիշները գործածում է հնարավոր բոլոր միջոցներով ու եղանակներով: Նույնարմատ, տարարմատ, բառապաշարի տարբեր շերտերի պատկանող, լեզվական ու խոսքային հոմանիշները հնարավորություն են տալիս խուսափելու կրկնություններից և բազմակողմանիորեն արտացոլելու նկարագրվող առարկաներն ու երևույթները, դրսևորվող հույսերն ու ապրումները:

Տերյանը որպես հոմանիշ գործածել է բոլոր այն խոսքի մասերը, որոնք կարող են ունենալ փոխաբերական գործածություններ: Բանաստեղծի չափածո խոսքին բնորոշ են անժխտական ածանցով հոմանիշների կիրառությունները: Տերյանի չափածոյում կիրառական հոմանիշների քննությունը բացահայտում է բանաստեղծի ստեղծագործությունների լեզվի առանձնահատկությունները, քանի որ առաջին հերթին առնչվում է Տերյանի բառընտրության արվեստին: Վերջինս տերյանական լեզվի ինքնատիպությունն ապահովող գործոններից է, որը լայնորեն դրսևորվում է բառերի իմաստաոճական տարբեր կիրառություններում: Հոմանիշների գործածությունը պայմանավորում է տերյանական խոսքի բազմապատկությունն ու բովանդակային հարստությունը:

Բանալի բառեր` բանաստեղծական լեզու, խոսքարվեստ, հոմանիշ, բառապաշար, խոսքի ներդաշնակություն, բարեհնչություն, երաժշտականություն:

Հայտնի է, որ գեղարվեստական խոսքի արտահայտչականությունը հաճախ կախված է բառի ճիշտ ընտրությունից, իսկ ընտրության հնարավորություն ամենից առաջ տալիս է հոմանիշների առկայությունը լեզվում: Ընդունված է ասել, որ հոմանշությունը ոճագիտության հիմքն է: «Ոճն սկսվում է այնտեղ, որտեղ կա ընտրություն: Լեզվի պարագայում ընտրությունը հոմանշությունն է»⁴⁸⁷, - գրում է Կ. Դոլինինը: Ասել է թե՛ ոճաբանական ելակետերն ու մոտեցումները հիմնականում գործում են այն դեպքում, ե-

* Հոդվածը ներկայացվել է 06.05.2019թ., գրախոսվել՝ 03.06.2019թ., տպագրության ընդունվել՝ 17.06.2019թ.:

⁴⁸⁷ Долинин К. А., Стилистика французского языка, М., 1987, с.150.

թե կա ընտրության հնարավորություն, եթե կան հոմանիշներ ու զուգաձևություններ:

Մ. Աբեղյանը առաջիններից մեկն էր, որ անդրադարձավ հոմանշության խնդրին և տարբերակելով մերձիմաստ ու նույնիմաստ բառերը՝ առանձնացրեց հոմանիշների երկու տարատեսակ՝ համանիշներ ու նույնանիշներ⁴⁸⁸: Հետագայում, սակայն, ինչպես նկատում է Ն.Պառնասյանը, «դպրոցական քերականությունների մեջ հոմանիշ ու նույնանիշ տերմինները նույնացվեցին, իսկ իմաստային ու կիրառական նրբերանգներ ունեցող բառերի համար սկսեց գործածվել հոմանիշ տերմինը»⁴⁸⁹: Այսպիսով՝ հոմանիշների բնութագրման համար անհրաժեշտ է նկատի ունենալ, որ հոմանիշները մերձիմաստ կամ նույնիմաստ լեզվական իրակություններ են, որոնք տարբերվում են արտահայտության ձևերով ու ոճական կիրառությամբ:

Գեղեցիկ, ինքնատիպ ու անկրկնելի հոմանիշներով հարուստ է Տերյանի չափածոն: Բանաստեղծի խոսքարվեստում հոմանիշները հանդես են գալիս ինչպես առանձին, այնպես էլ համատեղ գործածությամբ: Ըստ որում՝ առանձին գործածության դեպքում բանաստեղծը բառընտրության մեծ վարպետությամբ հոմանիշների շարքից ընտրում է այն բաղադրիչը, որը տվյալ դեպքում իր իմաստային նրբերանգներով ավելի ճշգրիտ ու տեղին է արտահայտում հեղինակի նպատակադրումն ու ասելիքը: Այսպես՝ *հով* գոյականն առաջնային իմաստով նշանակում է *հողմ, քամի*, իսկ *փոթորիկ, մրրիկ, ցիլլոն, սամուլ* և այլ բառերը դրսևորում են նշված հասկացության աստիճանական տարբերությունները: Նշված բառերից միայն *հով*, երբեմն էլ *քամի* բառերն են գործածված ոչ փոխաբերական նշանակությամբ, ինչպես՝ «Սարի լանջից *հովն* է *փչում...*» (ԱԷ, II, 95)⁴⁹⁰, «Ոսկե թերթերը *քամին* է թաղում...» (Ս, II, 177), իսկ նշված բառի հոմանշային տարբերակները գեղարվեստական պատկերներում հիմնականում հեղափոխության, փոթորկավետ կյանքի կամ կործանարար ուժի խորհրդանշային արժեք են ստանում, ինչպես օրինակ՝ «Ե՛լ, դեմկրատիա, *խոր ու խնդուն աղմկիր ամեն կողմ... Եվ որոտա՛ որպես հողմ...*» (ԱԷ, II, 126), «Տա՛ր, մի թողկիր, *քամի անասնձ – ոչինչ, ոչինչ...*» (ԱԷ, II, 74), «Որպես *փոթորիկ*, իջե՛ք ավերիչ Եվ խորտակեցե՛ք աշխարհն այս վապիր...» (ԱԷ, II, 127), «Դուրսը *ցուրտ* է *հիմա Եվ խավար և մրրիկ...*, Դուրսը *չար փոթորիկ*, Դուրսը *մուգ* է *այսօր...*» (ՈՅ, I, 195) և այլն: Ոճական ինքնատիպ արժեքով են հատկանշվում նաև *ցիլլոն* ու *սամուլ* բառերի կիրառությունները, որոնցից առաջինը հեղինակի բացասական, իսկ երկրորդը՝ դրական վերաբերմունքի դրսևորման արտահայտչաձևեր են դառնում՝ միաժամանակ նպաստելով նաև բանաստեղծի հանգավորմանը, ինչպես օրինակ՝ «Բո պաղ շենքերի մուգ նկուղներում Դու, կո՛ւյր, պահում ես մի ահեղ *ցիլլոն...*» (ԱԲ, I, 262), «Թող ինձ այրե *սամուլըդ*, Սերըդ որ սիրտ է *փշրում...*» (ՈՇ, I, 227): *Հով* բառի հոմանշային տարբերակների գործածությունները պայմանավորված են դրանց փոխաբերական իմաստների նրբերանգային տարբերություններով: Իմաստային այդ զանազանությունը բովանդակային հարստության, լեզվի ճկունության, խոսքի բազմազանության կարևոր գործառնայթ է կատարում:

Հայոց լեզվի բառապաշարի հարստությունն ու իմաստային բազմազանությունը բանաստեղծին հնարավորություն են տալիս օգտվելու հայերենի հոմանշային հարուստ բառազանձից: Որպես հոմանշային բառի բաղադրիչներ Տերյանը հասկացական, տաղաչափական, հուզաարտահայտչական տարբեր նպատակներով գործածության մեջ է դնում նաև ժողովրդախոսակցական, բարբառային բառեր, նույնիսկ փոխառություններ ու օտարաբանություններ: Այսպես՝ «Կատվի դրախտ» շարքի բանաստեղծություններում քաղթենիական աշխարհի կնոջ տիպականացման ոճական հնարանք է դառնում *տիկին* բառի գործածությունը: Բերենք օրինակ.

⁴⁸⁸ Աբեղյան Մ. Խ., Հայոց լեզվի տեսություն, Ե., 1965, էջ 159:

⁴⁸⁹ Պառնասյան Ն. Ա., Շարահյուսական համանիշները ժամանակակից հայերենում, Ե., 1970, էջ 21:

⁴⁹⁰ Տերյան Վ., Երկերի ժողովածու 4 հատորով, հ. 1, հ. 2, Երևան, 1972, 1973: Շարադրանքում ժողովածուների անվանումների փոխարեն նշվում են բանաստեղծական շարքի համառոտագրումը, հատորն ու էջը:

*Դուք այնպիսի խոսքեր գիտեք
Եվ այնպիսի նուրբ նապեր –
Դահճին անգամ Դուք կըրոյութեք,
Կըստրկացնեք և կայսեր...
Ո՞վ կարող է Ձեզ չըզոպել,
Ու չերգել Ձեզ, օ, տիկին... (ԿԴ, I, 255)*

Նշված բառի գործածությունների կողքին բանաստեղծի տրիոլետներից մեկում հանդիպում է նաև **մադամ** օտարաբանությունը՝ «Որպես **մադամ** Բովարին, Դու էլ կիզված տազնապով...» (ԱԷ, II, 28): Գրական համարժեքի փոխարեն օտար բառի ընտրությունը համատեքստում նպատակային է ու պատճառաբանված, քանի որ Ֆլորեթի հերոսուհու ազգանվան կողքին հայերեն **տիկին** բառը համահունչ չէր լինի: Կամ Զ. Թումանյանին նվիրված բանաստեղծություններից մեկում Տերյանը **խնջույթ** բառի փոխարեն գործածում է բանաստեղծական մթնոլորտին համահունչ ժողովրդախոսակցական **քե՛ք** բառը՝ «Այստեղ միշտ **քե՛ք** ու հանդես. Կեցցե՛ «մեր Օհանեսը...» (ԱԷ, II, 96), իսկ «Քաղաքը» ստեղծագործության մեջ ոճական նմանօրինակ գործառույթով կիրառում է գրական **խնջույթ** և դիցապատմական **օրգիա** բառերը (ԱԲ, I, 262):

«Մեղուգա» բանաստեղծության մեջ Տերյանի կողմից **դրախտ** բառի փոխարեն **եղեմի** գործածությունը բնավ պատահական չէ, ընդհակառակը՝ ունի գեղագիտական որոշակի արժեք և իրականացնում է հեղինակային նպատակադրում: Սիրո վայելքից հուսախաբ քնարական հերոսն իր սիրտը գերած գեղեցկուհուն համեմատում է հունական դիցաբանության մեջ հայտնի Գորգոնյան երեք քույրերից մեկի՝ Մեղուգայի հետ: Ինչպես Մեղուգան պատժվեց՝ կամենալով գեղեցկությամբ մրցել Աթենասի հետ, այնպես էլ նույն պատժին է արժանի մեղսական փայփայանքներով օժտված գեղեցկուհին: Ավսիայտ է, որ բանաստեղծական նման մթնոլորտին ներդաշնակ է **եղեմ** և ոչ թե համագործածական **դրախտ** բառը՝ «Եվ գիրկը նրա թվաց ինձ **եղեմ**, մեղքը – սրբապան..., Փայփայում էր ինձ և հևհևում էր երկրեմ Մեղուգան...» (ԳԶ, I, 134):

Երեկո բառի՝ Տերյանի չափածոյում ունեցած հուզաարտահայտչական տարբեր նրբերանգների մասին կարելի է անվերջ խոսել: Բանաստեղծի պատկերավորման համակարգում **երեկոն** խորհրդանշում է քնարական հերոսի երագած հանգրվանը, որն իր հետ բերում է երագների ու տեսիլների մի ոլորտական աշխարհ: **Երեկոն** նաև ամեն ինչի ու ամենքի նկատմամբ ներումով ու անչարությամբ լի հոգեվիճակի խորհրդանշիչ է: Ուշագրավ են **երեկո** բառի հոմանշային տարբերակները՝ *իրիկուն, իրիկնապահ, իրիկնաժամ, իրիկնամուտ, կիսախավար, կիսամութ, վերջալույս, մթնշաղ, աղջամուղջ*: Ահա օրինակներ՝ «Կապույտ ծածկոցն իջավ ցած, – Մեղմ ու անուշ **իրիկո՛ւն**...» (ՈՂ, I, 185), «**Իրիկնաժամին, թփերն օրորող հովի պես թեթև Մի ուրու անցավ, մի գունատ աղջիկ ճերմակ շորերով...**» (ՄԱ, I, 25), «Քո շարժումները ուրվականային Ստվերապաճույճ **իրիկնապահին** Շղթայեցին ինձ օղակով անտես...» (ՄԱ, I, 73), «Ես սիրում եմ զգվող – անգույթ աչքերըդ մութ, Որպես գարնան **իրիկնամուտ...**» (ԱԲ, I, 266), «**Կիսախավարը** այնպես նայիկ է...» (ԱԷ, II, 105), «Մարգերում իջավ թուփիչ **կիսամութ...**» (ՈՂ, I, 155), «Եվ **վերջալույսին** մի օր, օ, մի օր..., Բացվեինք իրար խոսքերով չնչին...» (ԱԷ, II, 42), «Ես սիրում եմ **մթնշաղը** նրբակերտ...» (ՄԱ, I, 67), «Ո՞վ է քո ոսկի ժրպիտը վառել Այս **աղջամուղջում**...» (ՈՂ, I, 199) և այլն: **Երեկո** բառի հոմանիշների ընտրության հարցում բանաստեղծը, ինչպես տեսնում ենք, նախապատվությունը տալիս է ժողովրդախոսակցական **իրիկուն** և այդ բառից բաղադրված **իրիկնաժամ, իրիկնամուտ, իրիկնապահ** բառերին:

Հոմանիշներից որևէ մեկի գերադասության խնդիրը կապված է նաև բառի՝ համատեքստում ունեցած կապակցելիության հատկանիշի, նրա՝ կոնկրետ բառային միջավայրում եզակիորեն անհրաժեշտ լինելու հանգամանքի հետ: Պետք է նկատել, որ լեզվում չկան այնպիսի բառեր, որոնք և՛ իմաստով, և՛ կիրառությամբ, և՛ արտահայտչական հնարավորություններով նույնը լինեն: Ճիշտ է ասված՝ «... աշխարհիս երեսին ոչ մի լեզվում երկու բառ չկա՝ մաթեմատիկաբար ճիշտ միևնույն նշանակությունը տվող, ա-

մենքն էլ տարբերվում են իրարից թե շատ և թե քիչ»⁴⁹¹: Ասել է թե՛ որոշ լեզվաբանների կողմից հոմանշային կարևոր սկզբունք համարվող փոխադարձ փոխարինելիության մասին խոսք լինել չի կարող: Իսկական բանաստեղծի համար լեզվում փոխարինող հոմանիշներ չպետք է լինեն: Նա պետք է փնտրի և գտնի տվյալ կապակցության մեջ անփոխարինելի բառը: Նման նրբանկատ մոտեցում է Տերյանը ցուցաբերում յուրաքանչյուր բառի ընտրության հարցում: Դիտարկենք *կապույտ և կարմիր* գունանունների հոմանշային տարբերակների դրսևորած ոճական-արտահայտչական հնարավորությունները բանաստեղծի խոսքարվեստում: Փաստ է, որ գույները հաճախ հոգեվիճակ ու տրամադրություն են արտահայտում պայմանավորելով խոսքի հուզականությունն ու արտահայտչականությունը: Տերյանի գեղարվեստական պատկերներում հաճախակի գործածական կապույտն իր տարբեր նրբերանգներով խորհրդանշում է մաքրություն, քնքշություն, լուսավոր ու երազային իրականություն: Բանաստեղծի չափածոյում *կապույտի* ոճական արժեքը լիովին ըմբռնելու համար կարևոր է անդրադառնալ նաև այս բառի հոմանիշներին, որոնց Տերյանը դիմել է թե՛ կրկնությունից խուսափելու, թե՛ ոճական այլ նպատակներով: Այսպես՝ *կապույտով* են հատկանշվում բանաստեղծի՝ հանգրվան դարձած երեկոն, դաշտերը, իրիկնաժամի լույսերը, բաղձալի անապատը, պաշտելի էակի աչքերը և այլն: Կապույտի գունային տարբեր նրբերանգներով բանաստեղծը կերտում է գեղեցիկ բառակապակցություններ, օրինակ՝ *երկնի մով* (ԱԲ, I, 284), *լուրթ սեր* (ԱԲ, I, 282), *լապուր ու լուրթ գարուն* (ԱԷ, II, 76), *երկնագույն, ծափի աչքեր* (ՄԱ, I, 45, Ս, II, 189): Իր բանաստեղծություններից մեկում *մուրթ* բառի փոխարեն Տերյանը գործածում է *կապույտ ծածկոց* (ՈՅ, I, 185) կապակցությունը: Ոճական յուրօրինակ արժեքով են օժտված նաև *նրբակապույտ* ու *կապուտաչյա* բառերը, ինչպես՝ «*Երկնասլաց ու թեթև, Նրբակապույտ ծածկած մեզ...*» (ԱԲ, I, 277), «*Տխուր մեռան կապուտաչյա Երասները երկնաշող...*» (ՄԱ, I, 54):

Բանաստեղծի ստեղծագործություններում նրբիմաստային ուշագրավ դրսևորումներ ունի նաև *կարմիրը*: Այն հեղափոխության գույնն է, ջերմացնելու, կիզելու հատկանիշով է օժտում իրերն ու երևույթները, ինչպես օրինակ՝ *արևածագ ալ-բոսոր* (ԱԷ, II, 122), *ալ շողեր* (ԱԷ, II, 137), *բոսոր արեգակ, ալ բոց* (ԱԲ, I, 290), *ալ արև* (ԵՆ, I, 252), *կարմիր կրակ* (ՈՇ, I, 221), *կարմիր վերջալույս* (ՄԱ, I, 37), *պուրպուր շուրթեր* (ՈՇ, I, 216) և այլն: *Կարմիրը* խորհրդանշում է նաև արյան գույնը և հոմանշային զույգեր կազմում *արյուն* բառով բաղադրված բառերի հետ («*Որբան, որբան, որբան արյուն- Վերբերվարդեր արնոտ ու բորբ...*» (ԵՆ, I, 248), «*Քեզ եմ երգում, կարմիր, արյունաբորբ Ազատության դրոշ - քեզ փա՛ռք...*» (ԱԷ, II, 124) և այլն):

Սպիտակը Տերյանի բանաստեղծական խոսքում հանդես է գալիս հոմանշային *ճերմակ* տարբերակով, ինչպես՝ «*Անպերը ճերմակ երամով անցան...*» (ՈՅ, I, 204), «*Ո՛ւմ լացն է այն, ո՛ւմ ցավոտ Երզն է ճերմակ մրրկում...*» (ԳՅ, I, 138) և այլն: Երբեմն որպես *սպիտակ* բառի հոմանիշ հանդես են գալիս նաև այլ բառեր, որոնք թեև գունանուններ չեն, բայց խոսքի ոճավորման գործում կարևոր դեր են կատարում, ինչպես օրինակ՝ «*Որբան ձյունե թիթեռ, Ձեռներ, ձեռներ բարակ...*» (ՈՇ, I, 216), «*Արծաթ ամպիկ լինեի, Յովի գար տարտղներ...*» (ԱԷ, II, 94):

Տերյանը ոչ միայն առատորեն գործածում է լեզվական հոմանիշների տարբեր, բազմապիսի միավորներ, այլև իր չափածոյում ստեղծում ու ձևավորում է հոմանշային բազմանդամ շարքեր: «*Յոմանիշների շարքը,- գրում է Ա. Սուքիասյանը,- իրենից ներկայացնում է բառերի և դարձվածաբանական միավորների պատմականորեն կազմավորված համաժամանակյա խմբավորում: Յոմանիշների շարքի մեջ մտնող բառերն ու դարձվածքներն արտահայտում են միևնույն հասկացությունը, բայց իրարից տարբերվում են կամ իմաստային նրբերանգներով, կամ ոճական կիրառությամբ, կամ էլ՝ մե-*

⁴⁹¹ **Նալբանդյան Մ.**, Յերկերի լիակատար ժողովածու 5 հատորով, հ. 3, Յերևան, 1940, էջ 213:

կով, և՛ մյուսով»¹⁰⁶: Ուշագրավ են հատկապես բանաստեղծի խոսքարվեստում հաճախակի գործածական բառերի կազմած հոմանշային շարքերը, ինչպես՝ *արև* (ՄԱ, I, 46) – *արեգակ* (ՄԱ, I, 37) – *արեգ* (ԱԷ, II, 36) – *արփի* (ԱԲ, I, 291), *առափոս* (ՈՇ, I, 229) – *արշալույս* (ՄԱ, I, 36) – *արևածագ* – *լուսարաց* (Վ, I, 209) – *լուսածագ* (ԱԷ, II, 117) – *ծեգ* (ԱԷ, II, 141) – *այգ* (ԵՆ, I, 241), *մշուշ* (ՄԱ, I, 34) – *մեգ* (ԱԷ, II, 29) – *մուժ* (ԵՆ, I, 250) – *մառախուղ* (ԱԷ, II, 30) – *շամանդաղ* (ՈՅ, I, 164), *ցանկություն* (ՄԱ, I, 85) – *երայ* (ԱԷ, II, 83) – *տենչ* (ՈՅ, II, 157) – *տենչանք* (ՄԱ, I, 68) – *հղծ* (ԱԷ, II, 140) – *անուրջ* – *ընծանք* (ԳՅ, I, 121) – *անըջանք* (ՄԱ, I, 77) – *փափագ* (ՄԱ, I, 55) – *տեսիլ* (ՄԱ, I, 36) – *ցնորք* (ԳՅ, I, 123), *թագուհի* (ՄԱ, I, 49) – *իշխանուհի* (Ս, II, 192) – *ըշխ* (ԱԷ, II, 108) – *դիցուհի* (ՄԱ, I, 49) – *պրիցուհի* (ԱԲ, I, 279), *թովիչ* (ՄԱ, I, 34) – *թովչական* (ՈՅ, I, 169) – *հնայուն* (ՈՅ, I, 185) – *հնայական* (ՈՅ, I, 187) – *դյուրիչ* (ԱԷ, II, 30) – *դյուրական* (ՄԱ, I, 71) – *մոգիչ* (ԱԷ, II, 107) – *մոգական* (ՄԱ, I, 57) – *կախարդական* (ՄԱ, I, 66), *վառել* (ԱԷ, II, 132) – *այրել* (ՄԱ, I, 66) – *կիպել* (ԱԷ, II, 49) – *բորբոքել* (ԱԷ, II, 132) – *լուսավառել* (ԳՅ, I, 119) – *հրդեհել* (ՄԱ, I, 55), *նիրհել* (ՄԱ, I, 100) – *ննջել* (ԳՅ, I, 146) – *մրափել* (ԱԷ, II, 68) և այլն: Տերյանական հոմանիշների համակարգում հաճախված են գոյականներով, որակական ածականներով, ձևի մակբայներով, ինչպես նաև բայերով կազմված հոմանշային շարքերը:

Տերյանի չափածոյի խոսքարվեստում զգալի տեղ ունեն նույնարմատ հոմանիշների գործածությունները, օրինակ՝ *մեղմ* (ՄԱ, I, 25) – *մեղմիկ* (ՄԱ, I, 43) – *մեղմորեն* (ՄԱ, I, 79) – *մեղմիվ* (ՄԱ, I, 25) – *մեղմաբար* (ՄԱ, I, 68), *լուռ* – *լռին* (ՄԱ, I, 32) – *լռիկ* (ԱԷ, II, 23), *մութ* – *մթին* (ԳՅ, I, 105) – *մթամած* (ՈՅ, I, 150), *դողդոջ* (ԳՅ, I, 142) – *դողդոջուն* (ԳՅ, I, 139), *անօգ* (ԿԴ, I, 256) – *անօգնական* (ԱԷ, II, 123), *հնայուն* (ՈՅ, I, 185) – *հնայական* (ՈՅ, I, 187), *անամոք* (ԳՅ, I, 123) – *անամոքական* (ԳՅ, I, 133) և այլն: Նույնարմատ հոմանիշների շարքում մեծ թիվ են կազմում նաև *-ույթուն/-անք*, *-ում/-ույթուն*, *-ում/-ուկք*, *-ում/-անք*, *-ել/-ելեն* հոմանիշ ածանցներով կազմված բառերը, ինչպես՝ *տխրություն* (ՄԱ, I, 77) – *տխրանք* (ՄԱ, I, 50), *բերկրություն* (ՄԱ, I, 57) – *բերկրանք* (ՄԱ, I, 75), *հիացում* (ՄԱ, I, 49) – *հիացմունք* (ՄԱ, I, 82), *արբեցում* (ՄԱ, I, 58) – *արբանք* (ՄԱ, I, 34) – *արբունք* (Ս, II, 172), *բոցե* (ՈՇ, I, 231) – *բոցեղեն* (ԱԲ, I, 290), *լուսե* (ՈՇ, I, 220) – *լուսեղեն* (ՈՅ, I, 191) և այլն: Ոճական յուրօրինակ արժեքով են օժտված նաև մեկ ընդհանուր բաղադրիչներով կազմված հոմանիշ բարդ բառերը, ինչպես՝ *տաղտկայի* (ԳՅ, I, 123) – *տաղտկահնչյուն* (ԳՅ, I, 115), *վշտակիր* (ՈՅ, I, 191) – *վշտածրար* (ԱԲ, I, 259), *հրկեպ* (ՈՇ, I, 218) – *հրակեպ* (ԱԲ, I, 277) – *բոցակեպ* (Ս, II, 165), *արյունաբորբ* (ԱԷ, II, 123) – *արնաներկ* (ԵՆ, I, 242) – *արնառուն* (Ս, II, 193) – *արյունավառ* (ԱԷ, II, 141), *վշտունայն* (ԱԷ, II, 129) – *ուռնայնաշունչ* (ՄԱ, I, 75), *հեռածավալ* (ՄԱ, I, 30) – *հեռանիստ* (ՄԱ, I, 97) և այլն: Յուրաքանչյուր դեպքում էլ գործում է ոճաբանական գործառույթը, և խոսքը հարստանում է նորանոր նրբերանգներով:

Տերյանի խոսքարվեստում միմյանցից հեռու բառերը հոմանշային արժեք են ստանում ոչ թե բառային, այլ խոսքային մակարդակում և դրանից դուրս հոմանշային հարաբերություն չեն դրսևորում: Այլ կերպ ասած՝ դրանց հոմանշությունը տվյալ դեպքում հեղինակային-անհատական է: Խոսքային (անհատական) հոմանիշներն ունեն «խիստ անհատական դրոշմ և սերտորեն կապված են հեղինակի բանաստեղծական մտածողության ու ճաշակի հետ»⁴⁹²: Այսպես օրինակ՝

Եվ այնպես *անգո՛ւյն, անմի՛տ, ապարդյո՛ւն,*

Տաղտկայի՛ և սի՛ն

Թվաց ամեն ինչ աշխարհում անհուն...

Եվ աշխարհն էր քար՝ սառն ու անխորհուրդ... (ՈՅ, I, 150)

Մեր տունը համր ու դատարկ է,

Մեր տունը որբ ու ավեր է... (ԵՆ, I, 246)

⁴⁹² Էլյան Ս. Ա., Ժամանակակից հայերենի բառային ոճաբանություն, Ե., 1989, էջ 141:

Ակնհայտ է, որ *անմիտ* ու *ապարդյուն* բառերը, անկախ կիրառությունից, խոսքից դուրս էլ ունեն իրենց հոմանշային կայուն կապերը, իսկ *անզույն* բառը, առանձին վերցրած, դրանց լեզվական հոմանիշը չէ: Այն բառաշղթայում է հոմանշային արժեք ձեռք բերել՝ բացասական իմաստային հատկանիշով համադրվելով *անմիտ* ու *ապարդյուն* հոմանիշներին: Իսկ *տաղտկալի* ու *սին, քար, սառն* ու *անխորհուրդ, համր* ու *դատարկ, որբ* ու *ավեր* բառերն իմաստով բավականին հեռու են, բայց հեղինակային նպատակադրմամբ համատեքստում հանդես են գալիս որպես հոմանիշներ:

Անհատական հոմանշությունը գեղարվեստական խոսքի պատկերավորության անփոխարինելի միջոց է, որն ընդլայնվում է հատկապես բառերի փոխաբերական գործածությունների շնորհիվ: Դիտարկենք օրինակներ.

*Ու հեռվից դյուխում ես ու կանչում,
Լուսերե՛ս, անմարմի՛ն, անանո՛ւն...* (ՌՅ, I, 176)

*Չե՛կ ընդունեցիր երդում ու երկունք,
Դու արքայաբար վե՛հ ու անհպարտ...* (ԵՆ, I, 251)

Տերյանը խոսքային հոմանիշների ընտրության հարցում ելնում է այն հատկանիշից, թե որքանով է ոճական հոմանիշն իր իմաստային նրբերանգներով առավել ներդաշնակ ասելիքի ոգուն: *Լուսերես* բառի համար, երբ խոսքի առարկան պաշտելի էակն է, երազների դիցուհին, բանաստեղծը որպես հոմանիշներ ընտրում է *անմարմին* ու *անանուն* բառերը, իսկ *հե՛կ* բառին հոմանիշ՝ *անհպարտ* նորակազմությունը, որն ինքնատիպությամբ թարմություն է հաղորդում բանաստեղծական խոսքին:

Տերյանի ոճի կարևորագույն առանձնահատկություններից մեկը հոմանիշների կուտակումն է: Այդ առումով բանաստեղծը նմանվում է Գ. Նարեկացուն: Բազմակի հոմանիշները միևնույն խոսքաշարում գործածելով՝ Տերյանը համակողմանիորեն է քննաթափում բառային միավորները: Տվյալ դեպքում, քնականաբար, հոմանիշների հուզաարտահայտչական երանգավորումն ավելի ակնհայտ է, ինչպես օրինակ՝

*Ահաբեկում է և կանչում է քե՛կ,
Չե՛ծկտում է խե՛ղճ, անպո՛ր ու տկա՛ր...
Երգում է քամին, լալիս է նորից,
Անհույս ու անվերջ մղկտում է նա...* (ԳՅ, I, 132)

*... Ես ընկած էի անպոր ու մոլոր
Եվ հավետ մենակ և անդարձ մենակ,
Անանուն, անհայտ, անծանոթ* հեռվում... (ՌՅ, I, 150)

Միևնույն խոսքաշարում համատեղ գործածված *լալ-հեծկտալ-մղկտալ, խեղճ-անպոր-տկար, անանուն-անհայտ-անծանոթ* հոմանշային շարքերը ոճական նպատակադրում ունեն: Դրանց միջոցով բանաստեղծը ոճական հագեցվածություն, բազմազանություն է հաղորդում խոսքին, գեղարվեստական պատկերը ստանում է աստիճանական զարգացում, իսկ բանաստեղծության բովանդակությունը ամբողջանում է հոմանիշների իմաստային նրբերանգներով:

Անհիմն է այն կարծիքը, թե հոմանիշների համատեղ գործածությունը վնասում է խոսքի սեղմությանը: Ինչպես նշում է Ս. Մելքոնյանը, «...դա չի կարող վերաբերել գեղարվեստական լեզվին, ուր հոմանիշների այդպիսի օգտագործումով ընդգծվում է նախադասության առանձնապես կարևոր նշանակություն ունեցող հասկացությունը, դա ներկայացվում է իմաստային անհրաժեշտ նրբերանգներով, ավելի է զորեղանում խոսքի արտահայտչականությունը»⁴⁹³: Բացի դրանից՝ հոմանիշները միշտ ունենում են ինչ-որ չհամընկնող տարրեր՝ նրբիմաստային, արտահայտչական, ոճական առումներով: Այդ իսկ պատճառով «հոմանշային կրկնությունը հնարավորություն է ընձեռում առավել ամ-

⁴⁹³ Մելքոնյան Ս., Ակնարկներ հայոց լեզվի ոճաբանության, Ե., 1984, էջ 77:

բողջական և բազմակողմանիորեն բացահայտելու և նկարագրելու առարկան»⁴⁹⁴:

Տերյանն իր ինքնատիպ խոսքարվեստով հարստացրել ու ընդլայնել է հայ գրական լեզվի բառապաշարի և՛ իմաստային, և՛ ոճական ընդգրկումը: Յուրաքանչյուր բառ տերյանական լեզվում հանդես է գալիս ներգործման մեծ ուժով, ոճական ինքնատիպ արժեքով: Ասում են՝ մեկ բառով անհնար է մտնել բանաստեղծության մթնոլորտը, ինչպես մեկ հնչյունը դեռ երաժշտություն չէ, բայց Տերյանի չափածոն ժխտում է նշված դրույթը: Համագործածական, նորաստեղծ, նույնիսկ ժողովրդախոսակցական, բարբառային ու օտար բառերը բանաստեղծի խոսքարվեստում հոգեվիճակի, տրամադրության, հույզի և ապրումի արտացոլման յուրօրինակ միջոցներն են:

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱԲ – Այլ բանաստեղծություններ

ՄԱ – Մթնշաղի անուրջներ

ԱԷ – Անտիպ էջեր

ՈՂ – Ոսկի հեքիաթ

ԳՂ – Գիշեր և հուշեր

ՈՇ – Ոսկե շղթա

ԵՆ – Երկիր Նաիրի

Ս – Սևագրություններ

ԿԴ – Կատվի դրախտ

Վ – Վերադարձ

THE STYLISTIC PECULIARITIES OF SYNONYMS IN VAHAN TERYAN'S SPEECH ART

MERI HOVHANNISYAN

*Yerevan State University, Institute for Armenian Studies, Researcher,
The Centre of Pedagogy and Education Development, Lecturer, Assistant, PhD,
Yerevan, Republic of Armenia*

The article examines and analyzes the synonymous use of words belonging to different layers of the vocabulary. The study of synonyms belonging to common and passive vocabulary, allows revealing the richness and diversity of the language of V. Teryan. As components of the synonymous word, Teryan for conceptual purposes, in order to achieve the emotional expressiveness and certain metric characteristics, also uses colloquial, dialect words and even borrowings and barbarisms.

The poet uses synonyms in all the possible ways. Single root, mixed root synonyms, linguistic and speech synonyms belonging to different layers of vocabulary, allow avoiding repetitions and diversifying the described subjects and phenomena, the shown emotions and experiences.

Teryan uses as synonyms all the parts of speech that may have figurative meanings. The poet's poetic speech is characterized by the use of synonyms with non-negative affixes. The analysis of synonyms used in Teryan's poetic speech reveals the peculiarities of the language of the poet's poetic works, since the synonyms are associated primarily with the art of choosing words. This art belongs to the number of factors that ensure the originality of Teryan's language, and is expressed in different semantic and stylistic uses of words. The use of synonyms determines the informative richness and diversity of the Teryan's word.

Keywords: *Poetry Language, Speech Art, Synonyms, Socabulary, Harmony, Speech Harmony, Melodiousness.*

⁴⁹⁴ Арнольд И. В., *Стилистика современного английского языка*, Л., 1973, с. 129.

СТИЛИСТИЧЕСКИЕ ОСОБЕННОСТИ СИНОНИМОВ В ПОЭЗИИ ВААНА ТЕРЯНА

МЕРИ ОВАННИСЯН

*научный сотрудник Института арменоведческих исследований, преподаватель,
ассистент Центра педагогики и развития образования Ереванского
государственного университета, кандидат филологических наук,
г.Ереван, Республика Армения*

В статье изучается и анализируется синонимичное использование слов, принадлежащих к разным слоям лексики. Исследование синонимов, принадлежащих к общеупотребительной и пассивной лексике, позволяет выявить богатство и многообразие языка В. Теряна. В качестве компонентов синонимичного слова Терьян в понятийных целях, в целях достижения эмоциональной выразительности и определенных метрических характеристик использует также разговорные, диалектные слова и даже заимствования и варваризмы.

Поэт использует синонимы всеми возможными способами. Однокоренные, разнокоренные синонимы, языковые и речевые синонимы, принадлежащие к разным слоям лексики, позволяют избежать повторов и разносторонне отразить описываемые предметы и явления, проявляемые эмоции и переживания.

Терьян использует в качестве синонимов все части речи, которые могут иметь переносные значения. Его поэтической речи поэта свойственно применение синонимов с неотрицательными аффиксами. Анализ синонимов, применяемых в поэтической речи Теряна, выявляет особенности языка поэтических произведений поэта, поскольку синонимы связаны, в первую очередь, с искусством выбора слов. Это искусство принадлежит к числу факторов, обеспечивающих самобытность языка Теряна, и выражается в разных смысловых и стилистических применениях слов. Использование синонимов обуславливает содержательное богатство и многообразие терьяновского слова.

Ключевые слова: поэтический язык, искусство речи, синоним, лексика, гармония слова, гармония, музыкальность.